ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 29 >> հուլիսի 2013թվականի Ն 79 -Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՈՒ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և 15-րդ հոդվածով՝ **համայնքի ավագանի որոշում է.**

1. Սահմանել Գյումրի համայնքում ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (19) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան_____

Գ.Ադամյան _____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

Տ.Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. հուլիսի 29
ք.Գյումրի

Հավելված

Գյումրի քաղաքի ավագանու

2013թվականի հուլիսի 29-ի
N 79-Ա որոշման

Ձ Ե Վ Ե Ր

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՈՒ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման սույն ձևերը (այսուհետ՝ կարգ) տարածվում են Գյումրի համայնքի վարչական տարածքում ավտոկայանատեղի համար տուրք վճարողների (այսուհետ՝ վճարողներ) և ավտոկայանատեղերի կազմակերպիչների կողմից իրականացվող ավտոկայանման գործունեության նկատմամբ:

2. Գյումրու ավագանու որոշմամբ ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերապահելու դեպքում վերջիններս իրականացնում են սույն կարգով սահմանված հսկողությունն ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ՝ Գյումրու քաղաքապետի հետ կնքվող պայմանագրին համապատասխան:

3. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածով սահմանված հասկացությունների իմաստը:

4. Վճարողներն ավտոկայանատեղի տուրքը (այսուհետ՝ նաև տուրք) վճարում են կանխիկ կամ անկանխիկ ձևով Գյումրու քաղաքապետարանի հաշվեհամարին:

5. Ավտոկայանատեղի տուրքը վճարվում է միայն ընթացիկ տարվա համար և ընթացքում, ընդ որում՝

1) ընթացիկ տարվա տարեկան տուրքը վճարվում է տվյալ տարվա ընթացքում և համարվում է վճարված վճարման պահից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ,

2) ընթացիկ տարվա ամսական տուրքը համարվում է վճարված վճարման պահից մինչև ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթիվը,

[3]) եթե տվյալ ամսվա վերջին օրը լրանում է ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ից հետո, ապա վճարված տուրքի գումարը համարվում է վճարված մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ,

3) ընթացիկ տարվա շաբաթական տուրքը համարվում է վճարված վճարման պահից մինչև ժամկետի վերջին շաբաթվա համապատասխան օրը, ընդ որում.

ա) եթե տվյալ շաբաթվա վերջին օրը լրանում է ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ից հետո, ապա վճարված տուրքի գումարը համարվում է վճարված մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ,

4) ընթացիկ տարվա օրական տուրքը համարվում է վճարված վճարման պահից մինչև հաջորդ օրվա համապատասխան ժամը, ընդ որում.

ա) եթե վերջին օրը լրանում է ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ից հետո, ապա վճարված տուրքի գումարը համարվում է վճարված մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ,

5) ընթացիկ տարվա մեկ ժամվա տուրքը վճարվում է հետևյալ կերպ՝ ավտոկայանատեղում կայանելու պահից մինչև 5 րոպե տեղական տուրք չի վճարվում, իսկ 5 րոպեից ավելի կայանելու համար վճարվում է Գյումրու ավագանու որոշմամբ մեկ ժամվա համար սահմանված տուրքի դրույքաչափը՝ յուրաքանչյուր մեկ ժամի համար 100 (մեկ հարյուր) դրամ կանխիկ

6. Ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է անմիջականորեն և /կամ/ էլեկտրոնային համակարգերի միջոցով (նկարահանող, ձայնաազդանշանային համակարգեր և այլն):

7. Անմիջական հսկողությունն իրականացվում է համայնքի ղեկավարի կամ ավտոկայանատեղի կազմակերպչի կողմից նշանակած լիազորած անձի (անձերի) (այսուհետ՝ կարգավարների), իսկ էլեկտրոնային համակարգերով իրականացվող հսկողությունը՝ շրջիկ կարգավարների կամ այլ համակարգերի միջոցով:

8. Կարգավարի (շրջիկ կարգավարի) գործառույթներն են.

1) վճարովի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի կայանման համար տուրքի վճարված լինելու փաստի ստուգումը,

2) վճարման բացակայության կամ տվյալ ժամանակահատվածի համար տուրքը վճարված չլինելու դեպքում՝ տուրքի գանձումը:

Առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի պետ՝

Կ.Բաղալյան